ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-5-10

Թիվ 17/ 07

„17„ 01 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ին կայացած թիվ 1 նիստի N 2-Ն որոշումը:

Առդիր «44» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
Մուտք թիվ 112.11/722-17
«20» 01 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունվարի 2017 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ կետով, 82-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Թ.Պողոսյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Ի.Ազիզյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Ռ.Ազիզյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Ե.Ասմարյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Մ. Ղուլիյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Ա.Սարգսյան ---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Ս.Ստեփանյան ---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Գ.Նազարյան ---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------
Գ.Նավասարդյան---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)	----------

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2017թվականի հունվարի 13
գ.Արմավիր

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արմավիր
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 13-ի
N 2-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Մարգարյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 13.01.2017թ. թիվ 2-Ն որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Արմավիր գյուղական համայնք - 2017թ.

Ներածություն

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ում ներառվում են համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող միջոցառումները: Միջոցառումները պետք է հստակ նկարագրված լինեն, իսկ նախատեսված արդյունքները՝ չափելի: Դրանց իրականացումը պետք է շարունակաբար մոնիթորինգի ենթարկվի, որպեսզի սահմանված թիրախներից շեղումների դեպքում հնարավոր լինի քայլեր ձեռնարկել միջոցառումներ պլանավորված հուն վերադրաձնելու նպատակով: ՀՀԶԾ շրջանակներում իրականացված յուրաքանչյուր միջոցառում պետք է գնահատվի, որպեսզի բացահայտվեն թիրախային արդյունքներից հնարավոր շեղումների պատճառները, մշակվեն միջոցառումների իրականացման ավելի արդյունավետ իրականացման այլընտրանքային տարբերակներ և հետագայի համար դասեր քաղվեն:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը: Հնգամյա զարգացման ծրագրի մշակումը լուրջ աշխատանք է, որի կազմակերպմանն անհրաժեշտ է մոտենալ ամենայն պատասխանատվությամբ, կարևոր խնդիրներ են ծրագրի մշակման մեթոդական ցուցումների ապահովումը, ծրագրի առանձին բաժինների մշակման ժամանակացույցի սահմանումն ըստ կատարողների, ծրագրերի մշակման մեջ ներգրավված աշխատակիցների հրահանգավորումը, ծրագրի նախագծի ամփոփումն ու ավագանուն ներկայացնելը:

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Ողջունում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատակիցներին:

Շնորհակալություն Ձեզ, հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար:

Արմավիր համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի կազմումը և կատարումը գերակա խնդիր է մեր համայնքում՝ միջնակարգ դպրոցում, մանկապարտեզում, մշակույթի տանը, բուժամբուլատորիայում, փոստում, արտադրական ձեռնակություններում, առևտրի սպասարկման օբյեկտներում կրթականա մակարդակի բարձրացումը, բարոյա-հոգեբանական վիճակի բարելավումը, ինչպես նաև աշխատատեղերի ավելացումը: Համայնքի բնակչության գրեթե 30 տոկոսը ունի բարձրագույն կրթություն և առ այսօր էլ ունենք շատ ուսանողներ, որոնք սովորում են տարբեր բարձրագույն բուհերում:

Համայնքում 2017-21թթ. նախատեսվում է կատարել մի շարք կարևոր աշխատանքներ՝ դրանք են՝ համայնքում խմելու ջրի ցանցի հիմնովին վերանորոգումը, մանկապարտեզի շենքի հիմնովին վերանորոգումը, փողոցային լուսավորության անցկացում, փողոցների ասֆալտապատում և փոսալցում, ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգում, ինչպես նաև համայնքում եկեղեցի կառուցելը:

Խիստ կարևորություն եմ տալիս գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորմանը: Կցանկանամ, որ այս գիտակցումով առաջնորդվի յուրաքանչյուրը, մանկապարտեզ-դպրոցի մակարդակներով, քանզի մատաղ սերնդին է վստահված մեր ապագան՝ մեր վաղվա պետական, քաղաքական, մշակութային և հասարակական գործիչներին, կրթելու և հայեցի դաստիարակելու խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել այն գիտակցումը, որ այդ գիտելիքները պետք է ծառայեն ինչպես իրենց անձնական բարօրությանը, այնպես էլ ազգի ու հայրենիքի հզորացմանը:

Արմավիր համայնքը չունի գործող եկեղեցի: Արմավիր համայնքի նախկինում քանդված եկեղեցու տեղում նոր եկեղեցու և եկեղեցուն կից դպրատան, երիցատան, գրատան և ավտոկանգառի կառուցապատման նպատակով Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն 1995թվականին հատկացվել 1հա. տարածք և այդ տարածքում կառուցվել է հիմք, և այն առ այսօր մնացել է անավարտ՝ ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով:

Հույս ունենք նաև, որ կգտնվի մի բարերար՝ եկեղեցին կառուցելու և ավարտին հասցնելու:

Ծրագրի մշակմանը, քննարկմանն ու հաստատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերում ավագանու, համայնքապետարանի, դպրոցի, մանկապարտեզի, մշակույթի տան, փոստի, բուժամբուլատորիայի և համայնքի հիմնարկ ձեռնարկությունների աշխատակազմերն ու անհատ քաղաքացիները: Նշեմ նաև, որ բացի ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումից, համայնքապետարանը կարգավորում է տարվա ընթացքում ստեղծված խնդիրները՝ առաջնահերթության կարգով:

Շնորհակալություն:

Համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Մարգարկան

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

Երվարդունիների թագավորության շրջանում Արգիշտիխինիլի մեծ մասը ավերված լինելու հետևանքով մոտավորապես 4-րդ դարում մ.թ.ա. վերաշինում են մի նոր քաղաք և այն անվանում Արմավիր, որը դառնում է հայկական առաջին պետության՝ Երվանդյան Հայաստանի մայրաքաղաքը և իր գոյությունը պահում է նույնիսկ Արշակունիների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում, ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա, մարզկենտրոնից հեռավորությունը 7 կմ. մայրաքաղաքից՝ 50կմ հեռավորության վրա: Այժմ Արմավիր համայնքը աչքի է ընկնում ոչ միայն զարգացած գյուղատնտեսական արտադրությամբ, այլ նաև բնակիչների կուլտուրայի ու կենցաղի բարձր մակարդակով: Արմավիր համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են պտղատու և խաղողի այգիների մշակությամբ, որոնք հիմնականում արտահանվում են Ռուսաստանի Դաշնություն: Զբաղվում են նաև մանր և խոշոր անասնաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

Արմավիր համայնքի վարչական տարածքին սահմանակից են՝ Արևիկ, Հայկավան, Այգեշատ, Նոր Արտագերս և Ջրաշեն համայնքները: Արմավիր համայնքն ունի Արմավիր-Երևան, ինչպես նաև Արմավիր քաղաքի և հարակից համայնքների տրանսպորտային կապի միջոցներ:

Արմավիր համայնքի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ , հաճախ լինում է ցրտահարություն:

Արմավիր համայնք ունի 674.92 հա վարչական տարածք :

Ժողովրդագրություն

Համայնքն ունի 3563 բնակիչ, այդ թվում՝

հ/հ	Տեղեկատվություն	մարդ
1	Տղամարդիկ	1748
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	49,5
2	Կանայք	1815
	Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %	51,5
3	Թոշակառուներ	390
4	Փախստականներ	0

5	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	6
6	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	4
7	Հաշմանդամներ	25
8	Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	25
9	Զոհվածների ընտանիքներ	2
10	Աշխատունակ բնակչության թիվը	2360
11	Աշխատանք ունեցողների թիվը	1700
12	Գործազուրկներ	230
13	Գրանցված ընտրողների թիվը	2360
14	Ընտանիքների (ծխերի) թիվը	976

Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 619 առանձնատուն՝ ընդհանուր մակերեսը կազմում է 98890 հազ.քմ, Համայնքում կան 6 կիսակառույց առանձնատներ: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն տնամերձ հողամասեր, սակայն տնտեսական սուղ պայմանների պատճառով չեն կարողանում կառուցել առանձնատներ:

Հողօգտագործումը

Համայնքում հողի սեփականաշնորհման գործընթացը իրականացվել է.

հ/հ	Տարածքի անվանումը	Տարածքի չափը/հա/
1	Համայնքի վարչական տարածքը	674.92
2	Գյուղատնտեսության նշանակության հողեր	412.31
3	Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր	10.48
4	էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար	3,14
5	Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր	0.20
6	Հատուկ նշանակության հողեր	0
7	Ջրային տարածք	6.65
8	Բնակավայրի տարածք	242.14

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Երվանդունիների թագավորության շրջանում Արգիշտիխինիլի քաղաքի ավերվելուց հետո, նրա արևելյան մասում, հաշվի առնելով տեղանքի հարմարավետությունը, Երվանդունիները մոտավորապես մ.թ.ա. 4-րդ դարում վերաշինում են մի նոր քաղաք և այն անվանում են Արմավիր (որը ըստ Ղ. Ալիշանի մեկնաբանության նշանակում է բլրի վրա կառուցված բերդ), որը դառնում է հայկական առաջին պետություն՝ Երվանդյան Հայաստանի մայրաքաղաքը:

Արմավիրի գյուղատնտեսական արտերը հիմնադրվել է 1929թ և կոչվել է« Նոր կյանք»:

Արմավիր գյուղը /նախկին Ղուրդուղուլին/ անճանաչելիորեն փոխվել է: Այժմ նա աչքի է ընկնում ոչ միայն զարգացած գյուղատնտեսական արտադրությամբ, այլև բնակիչների կուլտուրայի և կենցաղի բարձր մակարդակով:Ողջ հայ ժողովրդի հետ միասին պայքարի ու մաքառումների դժվարին ճանապարհ է անցել նաև աշխատավոր արմավիրցին :

Արմավիր համայնքի բնակչության հիմնական մասի արմատները եկել են Պարսկաստանից (ազգամիջյան կռիվներից ելնելով):

Համայնքը ունի մշակույթի տուն, միջնակարգ դպրոց, արվեստի /երաժշական/ դպրոց, մանկապարտեզ, ինչպես նաև առողջապահական կենտրոն, փոստային ծառայություն և ԱՏՍ:

Արմավիր համայնքը գյուղատնտեսության բնագավառում ունի իր ուրույն տեղը, համայնքը ունի խաղողի այգիներ, պտղատու ծառեր, հիմնականում կեռասենի, սալորենի, դեղձենի և ծիրանենի:Համայնքում զարգացած է նաև բանջարաբոստանային և հացահատիկային կուլտուրաները:

Արմավիր համայնքը արտադրում է մեծ քանակությամբ խաղող, պտուղ և բանջարեղեն,որը մթերվում է նաև Արմավիրի համայնքում՝ «Պռոշյան» ՓԲԸ-ի գործարանի մասնաճյուղում: Արմավիր համայնքում մշակված և աճեցված մրգերը / կեռաս, ծիրան, դեղց, սալոր և խաղող/,100 տ-ով ուղարկվում է Ռուսաստանի Դաշնություն, ինչպես Հայաստանի Հանրապետության շուկաներում՝ վաճառքի:

Արմավիր համայնքն ունի մեկ միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1970թվականին, ունի 650աշակերտ տեղ, ներկայումս հաճախում են 310 աշակերտներ: Դպրոցն ունի 37 մանկավարժներ, որոնք ունեն բարձրագույն կրթություն: 2008թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության միջոցներից 210մլն.դրամ հատկացվել է դպրոցի վերանորոգման համար և այն ավարտվել է 2010թվականի տարեվերջին:

Արմավիր համայնքում գործում է 6 ամսյա աշխատանքային ժամկետով մանկապարտեզ՝ երկու խմբով՝ 45-50 երեխա հաճախականությամբ, ունի 13 աշխատակիցներ: չունի ձմեռային

ջեռուցում: Շենքը կառուցված է դեռևս 1923թվականից, որը 2016թվականին գյուղապետարանի միջոցներով մասնակի վերանորոգվել է: Մանկապարտեզը ներկա պայմաններին չի համապատասխանում, այն ունի խիստ վերանորոգման կարիք:

Համայնքն ունի մշակույթի տուն, որը կառուցվել է 1965-1970թվականներին: Շենքը երկհարկանի է, բեմահարթակով և կինո էկրանով, 700 տեղանոց դահլիճով, որը համապատասխանում է ներկայիս պամաններին: Այն վերանորոգվել է 2006-2007թթ. ՀՀ սոց հիմնադրման ծրագրով: Մշակույթի տանը հաճախ իրականացվում է միջոցառումներ: Ունի մարզական խմբակներ: Ընբշամարտի խմբի երեխաները հաճախ մրցումներ են ունեցել Հանրապետության տարբեր քաղաքներում և մարզերում, որտեղ ունենք առաջին տեղերում զբաղեցրած մարզիկներ: Մշակույթի տունը ունի 6 աշխատաիցներ:

Մշակույթի տանն է գտնվում գյուղի գրադարանը, որը ունի շուրջ 13625 կտոր գիրք: Այն մատակարարում է համայնքի ընթերցողներին, որն ունի մեկ աշխատակից:

Արմավիր համայնքն ունի արվեստի/երաժշտական/ դպրոց, որը կառուցվել է 1973 թվականին: Այն կրթել և կրթում է համայնքի և նրան հարակից համայնքների աշակերտներին՝ զարգացնելու երաժշտական կարողություններն ու ունակությունները, ձևավորելու ճաշակ և արվեստ նրանց մեջ:

«Արմավիր զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ երաժշտական դպրոցը, այժմ «Արվեստի դպրոց » ՊՈԱԿ-ը ստացել է Ճապոնիայի Կառավարության դրամաշնորհը՝ փոխելու տանիքը, կատարելու արտաքին շինարարական աշխատանքները՝ փոխել դռներն ու պատուհանները: Արվեստի դպրոցի վերանորոգումը լիարժեք դարձնելու համար 2010թ. տարեկան բյուջեից գյուղաետարանը տրամադրել է շուրջ 4մլն. ՀՀդրամ: Այժմ հաճախում են, թե համայնքից և ,թե հարակից համայնքներից շուրջ 80 երեխաներ և ունի 19 աշխատակիցներ:

Արմավրի գյուղապետարանի շենքը նույնպես կապիտալ վերանորոգվել է 2010թվականին համայնքի բյուջեի միջոցներով՝ ունի յոթ համայնքային ծառայողներ, համայնքի ղեկավարի օգնական և 4 տեխսպասարկման աշխատակիցներ:

Արմավիր «Առողջության Կենտրոն» ՀՈԱԿ-ը սպասարկում է Արմավիր և Հայկավան գյուղերի ազգաբնակչությանը: Գյուղը սպասարկում են երկու բժիշկներ՝ մանկական և ընտանեկան, ինչպես նաև 10 բուժքույրեր:

Համայնքի բնակչության 30 տոկոսը ունի բարձրագույն կրթություն, որոնք կարողանում են կազմակերպել համայնքի կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական և գյուղատնտեսական աշխատանքները: Համայնքը ունի 10 առևտրային կետեր, հացի փռեր, 2 դեղատուն, փոստ և ԱՏՍ /Արմենթելի/:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		պլան	կատարող.
1.	Հողի հարկ	7560	4321.8
2.	Գույքահարկ	3130	2627.3
3.	Տեղական տուրք	70	21.8
4.	Օրենքով և իրավական ակտերով սահմանված մուտքեր	459.1	459.1
5.	Հողի վարձակալության վճար	1380	1415
6.	Գույքի վարձակալության վճար	660	605
7.	ՀՀ պետ բյուջեից սուբվենցիա	4534.5	4534.5
8.	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	59598.7	59600.7
9.	ՀՀ պետական բյուջեից համայնքի բյոջեին տրամադրվող այլ դոտացիա	283.5	283.5
10.	Տարեսկզբի ազատ մնացորդ	912.9	912.9
11.	Հողի օտարումից եկամուտ	2111.4	2111.4
	Ընդամենը	**80700.1**	**76893**

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 19%:

h/h	Հիմնարկներ	Տարեկան	
		պլան	կատարող.
1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	26052	26026.5
2	Արտադպրոցական դաստիրակություն	13974.5	12360.5
3	Սոցիալական պաշտպանություն	3900	3750
4	Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ	1408.4	1408.4
5	Նախադպրոցական կրթություն	6290	5874.7

6	Հանգիստ Մշակույթ,սպորտ և կրոն	10377	10377
7	Աղբահանում և Ջրամատակարարում	14831.3	14788.3
8	Միջնակարգ կրթություն	100	100
9	Նախագծահետազոտական ծախսեր	250	200
11	Կապիտալ նորոգումների ծախսեր	2600	1280.5
12	Շենքերի և շին. կառուցում	174.3	-
	Ընդամենը	79957.5	76165.7

Արմավիր համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների ծավալների վերաբերյալ տեղեկություններ.

հհ	Շահագործող կազմա-կերպության անվանումը	Արտադրանքի տեսակը	Արտադրության ծավալը/տարեկան/	Գործող է
1.	«Պռոշյան» ՓԲԸ գինու, կոնյակի և պահածոների գործարան	Գինի, կոնյակ պահածոներ	120 տոննա	այո

Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան:

Համայնքն ունի, մեկ եռահարկ միջնակարգ դպրոց՝ մասնակի վերանորոգված, ներկայումս ունի 310 աշակերտ նախատեսված է 600 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 37 հոգուց, ունի նախակրթարան, որտեղ հաճախում են մոտ 50 երեխաներ՝ երկու խմբով:

Համանքն ունի մեկ մանկապարտեզ, աշխատում է 6ամիս ժամկետով, նախատեսված է 75 սանի համար, ներկայումս հաճախում են 50-55 սան, կոլեկտիվը բաղկացած 13 հոգուց:

Համայնքում գործում է մեկ բուժ ամբուլատորիա, նախատեսված է օրական 25-30 մարդու սպասարկման համար, կոլեկտիվը բաղկացած 10 հոգուց:

Համայնքը ունի «Արվեստի դպրոց» որտեղ հաճախում է 80երեխաներ և կոլեկտիվը բաղկացած է 19 աշխատակիցներով:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 25 մարդ:

Արմավիր համայնքում առկա աշխատուժի միայն 25%-ն է զբաղվում գյուղատնտեսությամբ, 35%-ը աշխատում է համայնքում գործող հիմնարկ ձեռնարկություններում, 15%-ը աշխատում է Արմավիր քաղաքում, 15%-ը զբաղվում է տնային տնտեսությամբ և միայն 10%-ն է աշխատանք փնտրում:

2.3.Համայնքում իրականացվող ծրագրեր

Արմավիր համայնքի տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն:

Չեն նախատեսված նաև հարևան համայնքների հետ համատեղ, գալիք հինգ տարիների համար, նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ:

Չեն նախատեսված նաև տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր:

Չեն նախատեսված նաև համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ:

Պետության կողմից իրականացվող ծրագրերի ներդրումը խթան կհանդիսանա համայնքի զարգացման համար /սակայն դեռևս այն նախատեսված չէ/:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր

N	Ծրագրի, միջոցառում	Ծախսը	Ֆինանսական միջոցներ	ֆինանսավորման աղբյուրները	կատարման ժամկետները	

	ան, աշխատանքի անվանումը			համայնքի բյուջե	դրսից կապիտալ	դրսից ոչ պետական աղբյուրներ /դրամ/	2017թ. ծախսը ՀՀՆ.միջոց	2018թ. ծախսը ՀՀՆ.միջոց	2019թ. ծախսը ՀՀՆ.միջոց	2020թ. ծախսը ՀՀՆ.միջոց	2021թ. ծախսը ՀՀՆ.միջոց	
1.	Համայնքի կենտրոնական փողոցների և նոր թաղամասերի գիշերային լուսավորության անցկացում /մ/	900	2100	2100	-	-	400	400	400	400	500	սոցիոլեն վերջմրում
2.	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում՝փոսա-լցում /քառ.մ/	300	4000	4000	-	-	800	800	800	800	800	սոցիոլեն վերջմրում
3.	Ասֆալտապատում /քառ. մ/	2000	10000	10000	-	-	2000	2000	2000	2000	2000	վերջմրում
4.	Համայնքում եկեղեցու կառուցում	1	100 000	5000	95000	-	20000	20000	20000	20000	20000	վերջմրում
5.	Աջակցություն համայնքի նոր թաղամասի գազիֆիկացմանը /մետր/	500	4000	4000	-	-	500	500	500	1500	1000	սոցիոլեն վերջմրում

6.	Համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կապ նորոգման ը /գծ.մետր/	17500	80 000	8000	-	72 000	20000	15000	15000	15000	15000	Սոխուրեն վերոմոտ
7.	Մանկապ արտեզի շենքի կապիտալ վերանորո գում /քառ.մ/	30000	30 000	3 000	27000	-	20000	10000	0	0	0	Սոխուրեն վերոմոտ
8.	Աջակցությ ուն ներհամայ նքային՝ ոռոգման ջրատարի վերանորո գման/	1500	1 500	1500	-	-	300	300	300	300	300	Սոխուրեն վերոմոտ

2.5.Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Արմավիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում առկա են գյուղատնտեսական նշանակության տասնյակ հեկտարներով վարելահողեր, որոնք ոռոգման ջրի լիարժեք առկայության դեպքում կմշակվեին և համայնքում կբացվեր նոր աշխատատեղեր՝ կբարելավվել համայնքի բնակիչների սոցիալական վիճակը:

Ոռոգման համակարգի հետ կապված համայնքը ունի ևս մեկ խնդիր՝ համայնքին պատկանող շուրջ 40 հա ոռոգելի հողատարածի ոռոգումը, վերջին երեք տարվա ընթացքում իրականացվում է ոչ թե ոռոգման ջուր մատակարարող կազմակերպության, այլ գյուղապետարանի կողմից; Առաջիկայում հրամայական է, որ վերը նշված հողատարածքի ոռոգումը իրականացնի համայնքի այլ հողատարածքները ոռոգող կազմակերպությունը, քանի որ գյուղապետարանը ոռոգումը իրականացնում է խմելու ջրի համար նախատեսված արտեզիան ջրհորից ինչը առաջացնում է ֆինանսական լրացուցիչ բեռ՝ ծախսված էլեկտրոէներգիայի մասով, քանի որ գյուղապետարանը ոռոգման ջրի գումար չի գանձում;

Այսինքն գյուղապետարանը ստիպված ծախսում է գումար, որը կարող էր ուղղել համայնքի սոցիա-տնտեսական զարգացման ծրագրերին

Համայնքի մշակույթի տանը լոկալ ջեռուցման համակարգ անցկացված չէ, որը սպորտին, մշակույթին վերաբերվող միջոցառումների լիակատար և որակով /նաև ձմռան ամիսներին/ անցկացնելու նպատակով՝ խիստ անհրաժեշտություն է: Ցանկալի է բարեկարգել՝ վերանորոգել

եղած վոլեյբոլի և ֆուտբոլի դաշտերը, համայնքում՝ երիտասարդության շրջանում ակտիվ մշակութային և մարզական կյանքը, լիարժեք մասայականացնելու նպատակով:

Համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման համար խոչնդոտներ են հանդիսանում դպրոցում, մշակույթի տանը և համայնքապետարանում եղած սակավ ֆինանսական միջոցները, որոնց առկայության դեպքում կբացվեր խմբակներ, դասընթացներ, կկազմակերպվեր զբոսանքներ դեպի հանրապետության տեսարժան վայրեր, բնության գիրկ, մատաղ սերնդին՝ դեռահասներին ու պատանիներին կծանոթացնեին հայրենի բնությանը, գեղատեսիլ վայրերին:

Համայնքում բնակչության սոցիալական պաշտպանություն գործընթացը, ավելի նպատակային, կազմակերպելու համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ, որոնք կուղղվեն բնակչության բարեկեցության ապահովության համար՝ համայնքի ընտանիքներում յուրաքանչյուր ծնվածների, մահացածների, հիվանդությունների դեպքում կցուցաբերվեր դրամական օգնություն: Հենաշարժական խնդիրներ ունեցող բնակիչներին համապատասխան սայլակներով և սարքավորումներով ապահովելու համար ունենալ միջոցներ: Համայնքում ուսումնական հաստատությունների, խանութների, բուժ ամբուլատորիայի, մշակույթի տան, հասարակական օբյեկտների մուտքերը հարմարեցնել հաշմանդամության սայլակներին համապատասխան: Նման միջոցառումները կնպաստեն հաշմանդամների մասնակցությանը հասարակական կյանքում:

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար եղած սպորտային՝ ֆուտբոլի, կարատեի և ըմբշամարտի պարապմունքներից զատ նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել՝ կազմակերպել վոլեյբոլի, վազքի, բոքսի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում բնակարանային շինարարության խթանման նպատակով համայնքի բնակիչները, ովքեր ունեն տնամերձ հողամասեր՝ ցանկանում են կառուցել բնակելի տներ, փաստաթղթերի ձեռք բերումը, որը վերաբերվում է տարբեր հիմնարկություններից ստացվող թույտվություններին՝ դարձնել էլ ավելի դյուրին և հասնելի: Բնակչության Ֆինանսական հնարավորությունների ավելացումը՝ աշխատանքով ապահովված լինելու դեպքում:

Համայնքում անհրաժեշտություն է կանգառների պատրաստումը, նոր այգիների հիմնումը, աղբահանության հաճախակիացումը, համայնքատիրության ստեղծումը, համանքային գերեզմանատների պահպանումը՝ ցանկապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, որոնց համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ:

Համայնքի նորակառույց թաղամասի գազաֆիկացման աշխատանքերի ավարտին հասցնելը:

Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, ճանապարհային ենթակառույցների կառուցումը և պահպանումը:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի մի մասը բետոնյա կիսախողովակներ են, մյուս մասը՝ հողային հունով առուներ, որի պատճառով ունենում ենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է մշակաբույսերի անարդյունավետ աճեցում, բերքատվության կորուստ:

Համայնքում շրջակա միջավայրի պահպանության համար պակասում են մարկապարտեզում և դպրոցում կազմակերպվող զրույց զեկուցումները, դասընթացները, որն էլ ավելի կխթաներ բնակչության ինքնագիտակցմանը՝ շրջակա միջավայրի նկատմամբ անհատի վերաբերմունքին:

Համայնքում բնակչության ծնելիության և բազմազավակության խթանման համար պակասում է համայնքի բյուջեից նախատեսված գումարները, օրինակ՝ բազմազավակ մայրերին դրամական օգնություն տրամադրելը:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում յուրաքանչյուրի համամարդկային արժեքների ազատ և անկաշկանդ հաղորդակցման համար անհրաժեշտ է մշակութային միջոցառումների քանակական և որակական ավելացումը՝ ֆինանսական հնարավորության դեպքում:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1.Համայնքի աշխարհագրական դիրքը/բնակլիմայական պայմանները/ 2.Արմավիր քաղաքին մոտ լինելով աշխատուժի բավարարվածությունը 3.Համայնքի վարչական տարածքում արտադրական հիմնարկ ձեռնարկությունների, անհատ ձեռներեցների, խանութների, հասարակական օբյեկտների առկայությունը, նրանց արդյունավետ աշխատանքը 4.Համայնքապետարանի, մշակույթի տան, մանկապարտեզի, բուժ-ամբուլատորիայի, փոստի շենքերի և աշխատանքների բարվոք վիճակը 5.Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը 6.Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը	1.Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հողակտորների անմշակ լինելը 2.Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայությունը 3.Համայնքի մանկապարտեզի շենքի հիմնովին վերանորոգումը 4.Համայնքի հողային հունով ոռոգման առուները 5.Համայնքում կանաչ գոտիների պակասը 6.Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը 7.Հողի հարկի գանձումների դժվարությունները 8.Համայնքի բնակիչների անվճարունակութուն 9.Խմելու ջրի ցանցի հիմնովին վերանորոգումը 10.Փողոցների ասֆալտապատում,վերանորոգում 11.Համայնքում եկեղեցի կառուցելը
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
1.Կոնյակի, գինու, պահածոների արտադրություն 2.Ջերմոցային տնտեսության զարգացում 3.Խաղողագործության, պտղաբուծության	1.Բնակլիմայական պայմանները՝ ա/ գլոբալ տաքացումը բ/ երաշտը գ/ ցրտահարությունը

զարգացում	դ/ կարկտահարությունը 2.Բնակչության արտագաղթը

3.Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Արմավիր համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացման արդյունքում՝ կավելանան մշակովի հողատարածքները շուրջ 90 հա-ով, արդյունքում որոշակի կլավանա սոցիալական վիճակը, այն հողատերերի համար, որոնք ներկայումս չեն կարողանում մշակել իրենց հողերը; ոռոգման համակարգի բացակայության պատճառով;

Համայնքում կշարունակվեն նորատունկ այգիների հիմնումը, որը տարեկան կազմում է շուրջ 10 հա, իսկ պտղի արտահանման գործընթացների հեշտացման դեպքում՝ պտղատու այգիների, հիմնականում կեռասի և սալորի, տարածքները կավելացվեն ավելի արագ;

Համայնքի կենտրոնի բարեկարգման, կանաչապատման, ոռոգման ջրագծերի անցկացման, փողոցների գիշերային լուսավորության, խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման, համայնքային ճանապարների հարթեցման և խճապատման աշխատանքների համար նախատեսվում է հատկացնել 4000հազ.դրամ

Անհատ ներդրողների հետ համագործակցությամբ նախատեսվում է ստեղծել գյուղմթերքի չորացման արտադրամաս, որի առկայությունը կնպաստի գյուղ մթերքի իրացման և աշխատատեղերի ավելացման գործին;

, Մանկապարտեզի հիմնանորոգման արդյունքում, այն կգործի ամբողջ տարին,ներկայիս վեց ամսվա փոխարեն իսկ մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը հնարավոր կլինի 50-ից հասցնել մինչև 100 երեխայի;

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10%-ի աճ,

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ 10% :

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 15%:

Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը /չպայմանավորված բնական աճով/ նախորդ տարվա համեմատ՝ 10%:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

«Փողոցների գիշերային լուսավորության անցկացում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400000	400000	400000	400000	500000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում 1.2. Լարերի,մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Մոնտաժման աշխատանքներ 2.2. Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1 100 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 100 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Հանայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում նոր թաղամասերի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության անցկացման արդյունքում գյուղի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 2

«Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	800000	800000	800000	800000	800000

Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր ՝ 2 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 2 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 4 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճանապահների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

«Նորակառույց թաղամասերի փողոցների ասֆալտապատում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	20 00 000	20 00 000	20 00 000	80 00 000	80 00 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	400 000	400 000	400 000	400 000

	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			600 000	600 000	600 000	600 000	600 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ձյութի, մանրախճի,ավազի ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ասֆալտի փռում 2.2 Ասֆալտի հարդարում ,ամրացում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 4 000 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 6 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 10 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Նորակառույց թաղամասերում փողոցների ասֆալտապատում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապահների և փողոցների փոսալցման , ասֆալտապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները, դպրոց, մանկապարտեզ կհեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 4

«Համայնքում եկեղեցու կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Եկեղեցու կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	Հազ.դրամ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	20 000	20 000	20 000	20 000	20 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20 000	20 000	20 000	20 000	20 000
	4.						
		Ելակետային	Թիրախային արժեքներ				

	Ցուցանիշներ	արժեք					
		2016	2017	2018	2019	2020	2021
			20 000	20 000	20 000	20 000	20 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. համապատասխան նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերում 1.2. համապատասխան շինարարական կազմակերպության ընտրություն						
Ծրագրի բյուջեն	Կապիտալ ծախսեր՝ 100 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 100 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Եկեղեցու կառուցում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բնակիչների լիարժեք մասնակցությունը քրիստոնեական ծիսակատարությունների և պայքար աղանդների դեմ, ժողովրդին քրիստոնեական սխալ ուղղություն տանելու համար:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

«Աջակցություն գազաֆիկացմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն համայնքի նոր թաղամասերի և փողոցների գազիֆիկացմանը						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	500000	500 000	500 000	1500000	1000000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			400 000	200 000	200 000	200 000	200 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			600 000	300 000	300 000	300 000	300 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերում 1.2. Համապատասխան շինարարի ընտրություն 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.						

	2.2
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 3500 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 4000 000 դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	Աջակցություն համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացմանը
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի նոր թաղամասերի 1,2,3,4,5,6-րդ փողոցների գազիֆիկացման արդյունքում նորաստեղծ երկու թաղամասերում նորակառույց անհատական տները կգազաֆիկացվեն, նորմալ հունով կգնա տների լոկալ ջեռուցման անցկացման հարցերը, կբարելավվի կենցաղային պայմանները, կբարձրան բնակչության կենցաղային հարցերի կարգավորման նկատմամբ բավարարվածությունը և տրամադրությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6

« Խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Հազ դրամ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	20 000	15 000	15 000	15 000	15 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20 000	15 000	15 000	15 000	15 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20 000	15 000	15 000	15 000	15 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խողովակների ձեռք բերում 1.2. Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. ավազի ձեռք բերում 2.2 Խողովակների մոնտաժում, փոսալցում						
Ծրագրի բյուջեն	Կապիտալ ծախսեր՝ 80 000 000 դրամ						

	Ընդհանուր բյուջեն՝ 80 000 000 դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա
Ծրագրի հիմնական ռիսկերը	Խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման արդյունքում խմելու ջուրը կմատակարարվի շուրջօրյա, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, բավարարվածությունը և տրամադրությունը:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 7

«Մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ֆուտբոլի դաշտի նորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	20000000	10000000	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			20000000	10000000	0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 0000	100 0000	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Ավազի ձեռք բերում 1.2. Փոսալցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2 Կանաչապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր 0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 30 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30 000 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						

ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մանկապարտեզի շենքի կապիտալ նորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում մանկապարտեզի շենքի կապ նորոգամբ կբարելավվի մանկապարտեզ հաճախող երեխաների սանիտարա-հիգենիկ պայմանները, որը շատ անհրաժեշտ է երեխաների համար:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 8

«Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգմանը»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն ոռոգման ջրատարի վերանորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	300 000	300 000	300 000	300 000	300 000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			100 000	100 000	100 000	100 000	100 000
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			200 000	200 000	200 000	200 000	200 000
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1. Տեխնիկայի վարձակալում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Տեխնիկայի վարձակալում 2.2						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 500 000 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 1 500 000 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ոռոգման ջրատարի վերանորոգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						

Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի վերանորոգման արդյունքում ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը:

4.ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 79787.2 հազ ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 15370.5 հազ ՀՀ դրամ կամ 19%: -այս հատվածը տանել 2.2-ի սկիզբ

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Արմավիր համայնքում ունի հետևյալ պատկերը.

h/h	Եկամուտների տեսակը	2016 փաստացի	2017 նախատեսված	2018 նախատեսված	2019 նախատեսված	2020 նախատեսված	2021 նախատեսված
1.	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	75980.1	78690	79910	80060	80860	81610
2	Եկամուտներ	11561.4	13690.0	14910	15060	15360	15610
2.1	Ընթացիկ եկամուտներ	-	-				
1.	Հարկային եկամուտներ	69491	9000	10700	10800	11000	11200
1.1	Հողի հարկ	4321.8	6000	7500	7500	7500	7500
1.2	Գույքահարկ	2627.3	3000	3200	3300	3500	3700
1.3	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
1.4	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
2	Տուրքեր	21.8	30.0	50	100	200	250
2.1	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-

2.2	Տեղական տուրքեր	21.8	30.0	50	100	200	250
3	Ոչ հարկային եկամուտներ	2020	2160	2160	2160	2160	2160
3.1	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	1415	1500	1500	1500	1500	1500
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ	605	660	660	660	660	660
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	-	-	-	-	-	-
3.4	Տեղական վճարներ	0	0	0	0	0	0
3.5	Այլ ոչ հարկային եկամուտներ	459.1	500.0	0	0	0	0
	Եկամուտի կապիտալի գործառնություններից	2111.4	2000.0	2000	2000	2000	2000
	Պաշտոնական տրանսֆերտներ	64418.7	65000	65000,0	65000,0	65500,0	66000,0
	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ դոտացիա/	59600.7	60000	60000,0	65000,0	65500,0	66000,0
	Պաշտոնական կապիտալից տրանսֆերտներ դոտացիա/	0	-	-	-	-	-

5. ՀՀԶԾ մոնիտորինգ

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի «զարկերակի» վրա:

ՀՀԶԾ մոնիթորինգի պլանը ներկայացված է աղյուսակ 1-ում: